Արձանագրություն N 2

<<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

05 օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ. Ադամյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաբիկյան
Ն. Բաբոյան

Քարտուղար՝ Ն. Պետրոսյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ, Համակարգ/ բացվել են 2024թ. օգոստոսի 5-ին, ժամը 11:00-ին:

2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է օգոստոսի 6-ին, ժամը 11:00-ին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2024թ. օգոստոսի 7-ին, ժամը 11:00:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

7 օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

6. Հանձնաժողովի նիստին բացակայում էր հանձնաժողովի նախագահ Լ. Ադամյանը, ուստի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հանձնաժողովի նիստը նախագահեց նիստին ներկա հաջորդող թեկնածու Ա. Բաբիկյանը:

7. << **ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում, 2024թ. օգոստոսի 6-ին, ժամը՝ 11:00-ին:

8. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	«Սմարթլայն» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110 հեռ. 055 300093
2	«ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Դավիթ Անհաղթի փ. 11/6, հեռ. 033 998878

9. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնային հայտով հաստատված գին	Մասնակցի անվանումը և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկը (22 դրամ)*			
					«Սմարթլայն» ՍՊԸ		«ԲԻԳ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	թուղթ՝ A3 ֆորմատի	կգ	250	237500	195833.34	235000	237500	-

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում «Սմարթլայն» ՍՊԸ-ն:

11. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը Համակարգում կցվել և ներկայացվել է պատշաճ, սակայն արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունը. մասնավորապես «Սմարթլայն» ՍՊԸ-ի ներկայացված դիմում-հայտարարության /Հավելված 1/ մեջ սխալ է նշված չափաբաժնի համարը:

12. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Սմարթլայն» ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

13. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2024թ. օգոստոսի 9-ին, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

09 օգոստոսի 2024թ.
Ժամը՝ 11:00

14. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից համակարգում ներկայացվել է նոր դիմում-հայտարարությունը /Հավելված 1/, ուստի հանձնաժողովն որոշեց շարունակել գնահատման աշխատանքները:

15. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր դիմում-հայտարարությունը /Հավելված 1/ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

16. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին, և մերժել «ԲԻԳ ՄԱՐԿԵՏ » ՍՊԸ-ի հայտը:

17. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

18. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Բաբիկյան

Հանձնաժողովի անդամ _____ Ն. Բաբոյան

Քարտուղար՝ _____ Ն. Պետրոսյան